ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԻՐԵՆՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 դեկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի հունիսի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի օգոստոսի 29-ի N 1351-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի հունիսի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հոկտեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի հունիսի 11-ին Երևանում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ մաքսային ոլորտում համագործակցության ամրապնդման նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

2.1. ՀՀ Մաքսային մարմնի միջոցով աջակցություն ցուցաբերել Ամերիկայի Միացյալ Նահանգներին ցանկացած մաքսային իրավախախտում կանխելու, բացահայտելու և քննելու հարցում՝ Համաձայնագրի դրույթներին համապատասխան (հոդված 2, մաս 1),

2.2. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը կատարի Համաձայնագրի համաձայն ներկայացված աջակցության վերաբերյալ հարցումները՝ ՀՀ ներպետական

օրենսդրության և կարգավորումներին համապատասխան, և դրանց սահմանափակումների պահպանմամբ, ինչպես նաև իր իրավասության ու առկա ռեսուրսների սահմաններում (հոդված 2, մաս 2),

2.3. ապահովել, որ հարցման հիման վրա ՀՀ Մաքսային մարմինը տեղեկատվության ձևով աջակցություն տրամադրի՝ մաքսային օրենսդրության կատարումն ապահովելու և Մաքսային մարմինների կողմից մաքսատուրքերն ու մյուս հարկերը պատշաճ ձևով գնահատելու համար (հոդված 3, մաս 1),

2.4. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինն ԱՄՆ Մաքսային մարմինների հետ համագործակցի տեղեկությունների անվտանգ և արագ փոխանակումը դյուրացնելու նպատակով՝ հաղորդակցման ուղիների ստեղծման և պահպանման, արդյունավետ համակարգման նպաստման և նոր սարքավորումների կամ ընթացակարգերի դիտարկման և փորձարկման շուրջ, ինչպես նաև ցանկացած այլ ընդհանուր վարչական հարցերի շուրջ, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ պահանջել նրանց կողմից համատեղ ձեռնարկվող գործողություններ (հոդված 3, մաս 3),

2.5. ապահովել, որ հարցման հիման վրա ՀՀ Մաքսային մարմինն ԱՄՆ Մաքսային մարմիններին տեղեկացնի այն մասին, թե արդյոք ԱՄՆ տարածքից արտահանված ապրանքներն օրինական ձևով են ներմուծվել ՀՀ տարածք, ինչպես նաև ապահովել, որ պահանջի դեպքում տեղեկությունները պարունակեն ապրանքների մաքսազերծման համար օգտագործվող մաքսային ընթացակարգը (հոդված 4, մաս 1),

2.6. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը, հարցման հիման վրա և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն իրականացնի այն անձանց նկատմամբ, որոնք հայտնի է, որ կատարել են կամ կասկածվում է, որ պատրաստվում են կատարել մաքսային իրավախախտում՝ Հարցում ներկայացնող ամերիկյան կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին (հոդված 4, մաս 2, կետ «ա»),

2.7. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը, հարցման հիման վրա և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն իրականացնի փոխադրվող կամ պահեստավորված ապրանքների նկատմամբ, որոնք ճանաչվել են որպես կասկածելի ապօրինի շրջանառության առարկա՝ Հարցում ներկայացնող ամերիկյան կողմի տարածքում,

դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին (հոդված 4, մաս 2, կետ «բ»),

2.8. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը, հարցման հիման վրա և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն իրականացնի տրանսպորտային միջոցների նկատմամբ, որոնք, հայտնի է, որ օգտագործվել են կամ կասկածվում են, որ օգտագործվել են մաքսային իրավախախտումներ կատարելու մեջ՝ Հարցում ներկայացնող ամերիկյան կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին (հոդված 4, մաս 2, կետ «գ»),

2.9. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը, հարցման հիման վրա և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն իրականացնի Հարցում ստացող ՀՀ տարածքում գտնվող շինությունների նկատմամբ, որոնք հայտնի է, որ օգտագործվել են կամ կասկածվում է, որ օգտագործվել են իրավախախտումներ կատարելու առնչությամբ՝ Հարցում ներկայացնող ամերիկյան կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին (հոդված 4, մաս 2, կետ «դ»),

2.10. ապահովել, որ հարցման հիման վրա ՀՀ Մաքսային մարմինն ԱՄՆ Մաքսային մարմիններին տեղեկություն տրամադրի այն գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել ԱՄՆ տարածքում մաքսային իրավախախտումների այնպիսի իրավիճակներում, որոնք կարող են էական վնաս հասցնել ԱՄՆ տնտեսությանը, հանրային առողջությանը, հանրային անվտանգությանը կամ նմանատիպ այլ կենսական շահերին. ապահովել, որ հնարավորության դեպքում ՀՀ Մաքսային մարմինն այդպիսի տեղեկություններ տրամադրի՝ առանց այդ մասին հարցում ստանալու (հոդված 4, մաս 3),

2.11. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը հարցման հիման վրա տրամադրի ապրանքների փոխադրման և առաքման վերաբերյալ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս այդ ապրանքների արժեքը, նպատակակետը և տնօրինումը (հոդված 5, մաս 1),

2.12. Հարցում ներկայացնող ամերիկյան մարմնի կողմից բնօրինակներ կամ պատճեններ հատուկ չպահանջելու դեպքում ապահովել, որ Հարցում ստացող ՀՀ մարմինը միաժամանակ տրամադրի բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են համակարգչային տեղեկատվության մեկնաբանման կամ օգտագործման համար

(հոդված 5, մաս 3),

2.13. ապահովել, որ փոխանցված գործերի, փաստաթղթերի և այլ նյութերի բնօրինակները վերադարձվեն առաջին իսկ հնարավորության դեպքում (հոդված 5, մաս 5),

2.14. ապահովել, որ Հարցում ստացող ՀՀ մարմինը ձեռնարկի բոլոր ողջամիտ միջոցները՝ հարցումը կատարելու համար, և ձգտի ապահովել այդ նպատակի համար անհրաժեշտ ցանկացած պաշտոնական միջոց (հոդված 8, մաս 1),

2.15. ապահովել, որ Հարցում ստացող ՀՀ մարմինը հնարավորինս լիարժեք իրականացնի կամ թույլատրի Հարցում ներկայացնող ամերիկյան մարմնին անցկացնել նման տեսչական ստուգումներ, վավերացումներ, փաստահավաք հետաքննություններ կամ քննչական այլ միջոցառումներ, ներառյալ՝ փորձագետների, վկաների ու մաքսային իրավախախտումների կատարման մեջ կասկածվող անձանց հարցաքննությունը, քանի որ դա անհրաժեշտ է հարցումը կատարելու համար (հոդված 8, մաս 3),

2.16. ապահովել, որ Հարցում ստացող ՀՀ մարմինը բավարարի հարցումը՝ պահպանելով որոշակի ընթացակարգ այնքանով, որքանով այդ ընթացակարգն արգելված չէ ՀՀ ներպետական օրենսդրությամբ (հոդված 8, մաս 6),

2.17. Համաձայնագրի համաձայն ձեռք բերված տեղեկությունների համար որպես ստացող Կողմ ապահովել նույն աստիճանի գաղտնիություն, որը կիրառում է իր մոտ գտնվող նմանատիպ տեղեկությունների նկատմամբ (հոդված 9, մաս 1),

2.18. Համաձայնագրի համաձայն ձեռք բերված տեղեկություններն օգտագործել կամ բացահայտել միայն Համաձայնագրում նշված նպատակների համար՝ ներառելով ստացող հայկական Կողմի կողմից դրանց օգտագործումը ցանկացած վարույթում, և այդ տեղեկություններն օգտագործել կամ բացահայտել այլ նպատակներով կամ ստացող հայկական Կողմի այլ մարմինների կողմից, եթե դրանք տրամադրող Մաքսային մարմինը հստակորեն գրավոր հավանություն է տվել այդ օգտագործմանը կամ բացահայտմանը (հոդված 9, մաս 2),

2.19. ՀՀ կողմից ստացված տեղեկությունները տրամադրող ամերիկյան Կողմի հայցմամբ համարել գաղտնի. նշվում են նման հայցման պատճառները (հոդված 9, մաս 3),

2.20. տրամադրված տվյալների սխալ լինելու կամ փոխանակման ենթակա չլինելու դեպքում այդ մասին անմիջապես ծանուցել ամերիկյան Կողմին, իսկ այդպիսի տվյալներ ստանալու պարագայում երաշխավորել, որ այդպիսի տվյալներ ստացած ՀՀ Մաքսային մարմինը կփոփոխի կամ կվերացնի դրանք (հոդված 9, մաս 6),

2.21. ապահովել, որ համապատասխան ՀՀ Մաքսային մարմինը ձեռք բերի կամ պահպանի տեղական պայմանավորվածություններ՝ ապահովելու գաղտնի տվյալների, գործի նյութերի և փաստաթղթերի համապատասխան փոխանցումը, անվտանգ պահպանությունը, պահեստավորումը, մշակումը և ներքին տարածումը (հոդված 9, մաս 8),

2.22. հարցումը չբավարարվելու դեպքում ապահովել, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի Հարցում ներկայացնող ամերիկյան մարմնին՝ տրամադրելով հարցումը հետաձգելու կամ մերժելու պատճառների մասին հայտարարություն, ինչպես նաև գործի հետագա հետապնդման համար կարևոր հանգամանքները (հոդված 10, մաս 4),

2.23. որպես Հարցում ստացող Կողմ հանդես գալու պարագայում վճարել հարցման կատարման հետ կապված բոլոր ծախսերը՝ բացառությամբ փորձագետների և վկաների, ինչպես նաև գրավոր և բանավոր թարգմանության ու սղագրության հետ կապված ծախսերը, իսկ որպես Հարցում ներկայացնող Կողմ հանդես գալու պարագայում վճարել փորձագետների և վկաների, ինչպես նաև գրավոր և բանավոր թարգմանության ու սղագրության հետ կապված ծախսերը (հոդված 11, մաս 1):

3. Համաձայնագիրը նախատեսված է բացառապես Կողմերի միջև փոխադարձ աջակցության համար, և Համաձայնագրի դրույթները ցանկացած մասնավոր անձի համար չեն առաջացնում իրավունք՝ ստանալու, թաքցնելու կամ բացառելու որևէ ապացույց կամ խոչընդոտելու հարցման կատարումը:

Համաձայնագիրը նախատեսված է Կողմերի միջև առկա փոխադարձ մաքսային աջակցությունն ընդլայնելու և լրացնելու համար: Համաձայնագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ սահմանափակվեն Կողմերի միջև փոխադարձ աջակցության և առկա համագործակցության վերաբերյալ համաձայնագրերը, պայմանավորվածություններն ու գործելակերպերը:

Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Մաքսային մարմիններին ինքնուրույն կերպով տեղեկություններ տրամադրել այն գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել մյուս Կողմի տարածքում մաքսային իրավախախտումների:

4. Համաձայնագրի 9-րդ հոդվածը չի խոչընդոտում Համաձայնագրի համաձայն փոխանակված տեղեկությունների օգտագործումը կամ բացահայտումն այնքանով, որքանով առկա է այդպես վարվելու պարտավորություն ստացող Կողմի Սահմանադրությամբ կամ ներպետական օրենսդրությամբ՝ կապված որևէ քրեական վարույթի հետ: Ստացող Կողմը ցանկացած նման առաջարկվող բացահայտման մասին նախապես ծանուցում է տեղեկությունները տրամադրող Կողմին:

Համաձայնագրի 9-րդ հոդվածը չի խոչընդոտում նաև Համաձայնագրի համաձայն փոխանակված տեղեկությունների օգտագործումը կամ բացահայտումը՝ կապված ահաբեկչության կամ ազգային անվտանգության այլ հարցերի հետ, եթե ստացող Կողմի գործող օրենսդրության համաձայն՝ առկա է այդպիսի տեղեկություններն օգտագործելու կամ բացահայտելու պարտավորություն:

5. Համաձայն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի՝ եթե Հարցում ստացող կողմը որոշում է, որ աջակցություն տրամադրելով կխախտվի իր ինքնիշխանությունը, անվտանգությունը, հանրային քաղաքականությունը կամ այլ էական ազգային շահեր, կամ այն կհակասի իր ներպետական օրենսդրությանը և կանոնակարգերին, ներառյալ՝ օգտագործման և գաղտնիության սահմանափակումների երաշխիքների անհամապատասխանության ցանկացած իրավական պահանջ, ապա այն կարող է հրաժարվել կամ դադարեցնել աջակցությունը կամ կարող է տրամադրել այն՝ որոշակի պայմանների կամ պահանջների բավարարման դեպքում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի հունիսի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 դեկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1765